«ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն Ս. Զաքարյանին
(հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 1, 40/42
էլ. փոստ՝ all.group@inbox.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/ լուծելու մասին

ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 08.06.2022 թվականին N ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-22/1 կապալային աշխատանքների /այսուհետև՝ Աշխատանքներ/ կատարման պետական գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասասենյակների և միջանցքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 70 օրացուցային օր»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը Պայմանագրի կնքման օրվանից մինչ օրս չի կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 1 794 338 ՀՀ դրամ և 1 196 225 ՀՀ դրամ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 900108000275 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 6-րդ մասի ա/ կետի համաձայն՝ անձը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է, եթե «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Տվյալ դրույթը հաշվի առնելով՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 900108000275 հաշվեհամարին փոխանցել վերը նշված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները, հակառակ դեպքում Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Մ. Սարգսյան